

ԳԼՈՒԽ Թ ՂԵԻՈՆ՝Դ, ՂԵԻՈՆ՝Դ

Կ'երթար Գուրգեն տխուր՝ բայց ոչ որպես առաջ, սրտին վրայեն սոսկալի բեռ մը թեթեւցեր էր, վասնզի Յեղիսէի վերջին խօսքերը իւր վրայ ազդեցութիւն ըրած էին: Ուստի ծանր եւ դանդաղ կը ճանապարհորդէր, ո՛ւր որ խեղճ գիւղեր գտներ այն տեղուանք կ'իջներ, սիրով շինական մարդկանց հետ կ'ընտանենար, որոնք սկզբան կասկածանօք իրեն կը նայէին, բայց վերջը բարեկամ դառնալով իրենց քաշածները նորա առջեւ կը դնէին: Այսպէս օրերով, երբեմն միշտ շաբաթով կը դանդաղէր իւր ուղեգնացութիւնը, ո՛ւր որ իշխանական ամրոց մը տեսներ՝ շուտ կ'անցներ, ո՛ւր որ գիւղական պարզութիւն կար՝ լոցայ գարի հացը, լոցայ մածունն իբրեւ թէ իրեն քաղցր էին: Այսպէս անցաւ Արտազ գաւառը, Աւարայրի ընդարձակ դաշտը ուր իւր նախահոր Վարդանայ հսկայ յիշատակը կանգուն էր հայ սրտերու համար. կը տեսներ հեռուէն Մասիս լեռան գլուխը՝ ուր տեղացի ժողովրդոց համար միշտ կար եւ մնար Նոյայ տապանը. ուստի այս խորհրդածութեամբք կը մօտենար իւր դէմ եղեալ նպատակին՝ Բագրեւանդայ գաւառը, ուր իւր քեռին Քուրդիկ իշխանը կը տիրէր: Օդը արդէն սկսած էր մեղմանալ, ձիւները սկսած էին հալիլ, առուններն ու վտակները մէկ, մէկ ահագին գետ դառնալ, երբ տեսաւ մարդ մը, որ գլուխը կախած կ'երթար առջեւէն նիզակն ի ձեռին, հաստատ եւ ամուր քայլերով. այդ քայլուածքը եւ այդ շարժմունքը իրեն կը յիշեցներ ուրիշ յատուկ անձ մը, որ չէր կրնար մտաբերել, ուստի ձիուն ձայն մը հանեց եւ նա քանի մը ոտք առնելով, մարդուն քով գտնուեցաւ:

— Դո՛ւ ես, Յովնան եղբայր,— ըսաւ: Իսկ նա առանց գլուխը վեր վերցնելու

— Այո, Գուրգեն իշխան, ես ինքս՝ Յովնանն եմ:

— Առանց գլուխդ վերցնելու զիս իմ ձայնե՞ս կը ճանչես: